

իշխանին, վասնզի ես հոս չեկած Համփու վրայ խնուն հանդիպեցայ եւ նամակ մ'ել իրեն ունեի՝ տուի:

— Այս ի՞նչ կը նշանակէ,— ըսաւ դառնութեամբ իշխանը,— կաթողիկոս, զօրավար, նախարար միաբաներ են թուի թէ իմ անձիս դէմ, բարեկամական նամակի մը ձեւով փափագ կայ հին նահապետական դրութեան օրէնք եւ սովորութիւնդ վեր-վար ընելու, եւ այն միջոցին, որ ինձ նամակ մը կ'ուղարկեն, Համագասպայ նաեւ յուղարկել ի՞նչ ըսել է. կ'երեւայ թէ Մամիկոնեանս տան մէջ տարածայնութիւն ձգելու կամք ունեն:

— Տեր իշխան, ես այդպիսի իմ մտացս կարողութենէ վեր խնդիրներու մէջ չեմ կարող մտնել, ինձ ինչ հրամայեցին ըսել՝ ըսի, ինչ հրամայեցին ըսել՝ ըրի: Հիմա դուք եւս ինչ պատասխան որ հրամայեք տանիլ՝ կը տանիմ:

— Տէ՛, դու ի՞նչ բանի կը խառնուիս, մա՛րդ, քեզ հետ խօսողն ո՛վ է, ես ինքնիրենս կը խորհրդածեմ:

— Շատ բարի շատ իրաւացի է ձեր յանդիմանութիւնը, ներեցեք իմ միամտութեանս:

— Այդ աղջիկը քանի տարու կայ հիմա, եւ ի՞նչ նոր հրաշքով մէջտեղ ելեր է.

Չաւեն լուռ կեցաւ եւ գետին կը նայեր:

— Քեզ կ'ըսեմ, մա՛րդ, ինձ պատասխան չե՛ս տար:

— Կը ներեք, իշխան, ես կարծեցի թէ դուք ինքնիրենսիդ կը խորհրդածեք, եւ ուշադրութիւն չըրի ձեր հարցմունքին:

— Լաւ՝ մարդ ընտրեր են Կամսարականք ինձ յուղարկելու:

Դարձեալ Չաւեն լուռ կեցաւ. իսկ Մուշեղ ոտք ելնելով եւ խիստ դեմքով ըսաւ.

— Դու գնա՛, հանգչէ դուրսը, եւ երբ յոգնութիւնդ առնուս, կարելի է աւելի շնորհքով խօսիս իշխանաց հետ:

Եւ այս գրուցելով՝ ինք սկսաւ վեր-վար շոջագայիլ սենեկին մէջ: Այս Կամսարականաց նամակը բոլոր իւր խորհուրդներն հիմն ի վեր կը տապալէր, վասնզի Բագրեւանդայ գաւառին մէկ մասը, որ Գրիգորի մահուամբ ապահով